

**ՈՒՅ ՄԻՋԱՆԱՐԵԱՆ
ՀՈԳԵՒՈՐ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ
ՎԵՆԵՏԻԿԻ ԴՊՐՈՑՆ
ԸՍՏ ՀԱՅՐ ՂԵՒՈՆԴ ՎՐԴ. ՏԱՅԵԱՆԻ
ԶԱՅՆԱԳՐԵԱԼ ՇԱՐԱԿՈՑԻ¹**

Մաս Բ.

Յօդուածիս առաջին մասում նշուել է, որ Հ. Ղեւոնդ Տայեանի Զայնագրեալ Շարակնոցի հատորներից առաջին հերթին լոյս է տեսել հատոր Դ.-ն, որի սկզբում զետեղուած «Ազդ»-ում բացատրուած են այն հանգամանքները, որոնցից դրդուած ձայնագրութեան հեղինակը նախընտրել է հատորների տպագրութիւնն սկսել յատկապէս չորրորդ հատորից²: Արդ քննարկենք «Ազդ»-ում նշուած բոլոր կէտերը՝ սկսելով առաջինից, ուր ասւում է, որ խնդրոյ առարկայ հատորում, ինչպէս նաեւ միւս բոլոր հատորներում ամփոփուած երգերի եղանակները վերագրուում են Միիթար Սեբաստացուն³: Առաջին հայեացքից թւում է, թէ դա այդպէս էլ պէտք է լինէր, քանի որ Միիթարեան միաբանութեան հիմնադիրը լինելով, հէնց Սեբաստացին է Ս. Ղազարի Մայրավանքում սերմանել հոգեւոր երգեցողութեան առաջին հատիկները, որոնք էլ այդ խաղաղ կղզում տուել են իրենց հրաշալի ծիլերը: Մակայն նկատի առնելով, թէ Միիթար Սեբաստացուց յետոյ որքան ժամանակ է հոսել մինչեւ Հայր Ղեւոնդի՝ եւրոպական ձայնանիշերով իրա-

¹ Շարական Հայաստանեայց Եկեղեցւոյ, Զայնագրեաց Հ. Ղեւոնդ Վ. Տայեան Միիթարեան, Հատոր Դ, Պրակ 1-12, Վենետիկ - Ս. Ղազար, 1952, (Այսու՝ Զայնագրեալ Շարակնոց, 4. Դ): Յօդուածիս սկիզբը՝ Մաս Ա-ն, տե՛ս Բազմավէպի 2005-ի 1-4-ում, 379-389 էլերում:

² Զայնագրեալ Շարակնոց, 4. Դ, Ազդ (հատորի սկզբում): Նաեւ՝ Բազմավէպի վերոնշեալ յօդուածը, էջ 383-384:

³ Հ. Ղեւոնդ Տայեանն անշուշտ նկատի ունի ոչ թէ բուն եղանակները, այլ ուշանց վենետիկեան կամ Միիթարեան երգուածքները:

գործած ձայնագրութիւնների⁴ ժամանակաշրջանը, կարելի է արձանագրել, որ միաբանութեանս անդամները գեղեցիկ աւանդոյթ են ունեցել անխաթար կերպով պահել-պահպանել իրենց մեծանուն հիմնադրից ժառանգած երգեցողութիւնը՝ բանաւոր կերպով մի-մեանց փոխանցելով այն:

Վերոնշեալ «Ազդ»-ի երկրորդ կէտում ասւում է, որ խնդրոյ առարկայ Դ. Հատորը պարունակում է յատկապէս Աւագ Շաբաթուայ երգեցողութիւնը, որի գերը կարեւորում է որպէս Քրիստոսի Փրկագործութեան Խորհուրդը բովանդակող յիշարժան դրուագ հայոց շարականերգութեան մէջ: Սակայն ամէնից կարեւորն այս հատորում, ըստ Հայր Ղեւոնդ Տայեանի, Համբարձում Լիմոնճեանին վերագրուող երեք եղանակներն են, կամ ամելի ստոյգ՝ Աւագ Ուրբաթի Օրչնութիւնը, Հարցը եւ Համբարձին⁵: Արգոյ Հեղինակը սրանք համարում է «... մնածարժեք գոհարներ՝ որոնի կու գան այժմ յաւերժանալու ներկայ հատորին մէջ»⁶: Ըստ որում այս նմոյններից վերջինը՝ «Եկայք հաւատացեալք» Համբարձին, Հայր Ղեւոնդն այնքան առանձնայատուկ է համարել, որ լոյս է ընծայել այն ոչ միայն առանձին գրքոյինը⁷, այլև զետեղել «Բագմավէպ»-ի՝ 1933 թ. Սեպտեմբեր-Հոկտեմբերի յատուկ համարում, որը նույրուած է Քրիստոսի Սրբազն Խաչելութեան եւ Յարութեան չորհիւ մարդկութեան Փրկութեան 1900-ամեայ յոթելեանին⁸:

Արդ, հետեւելով Հայր Ղեւոնդ Տայեանի օրինակին, բազմահատոր Ձայնագրեալ Շարակնոցիս քննութիւնն սկսենք հէնց Հատոր Դ.-ում առկայ՝ վերոնշեալ երեք շարականներից⁹: Նախ անդ-

⁴ Այս մասին առաւել հանդամանալից տե՛ս ԱՐՓԻ ՎԱՐԴՈՒՄԵԱՆ, Միջբար Սերաստացին որպէս Միջբարեան միաբանութեան երաժշտական աւանդոյթի հիմնադրի, Բազմավէպ, 2001, էջ 325-332:

⁵ Ձայնագրեալ Շարակնոց, 4. Դ, համապատասխանաբար՝ էջ 273-283, էջ 284-296, էջ 311-325:

⁶ Նոյն տեղում, Ազդ:

⁷ Հ. Ղեւոնդ ՏԱՅԵԱՆ, «Եկայք հաւատացեալք, նմոյշ մը հայ եկեղեցւոյ սրբազն երաժշտութեան, երոպական ճայնագրութեամբ, հանդերձ մաս-նագիտական ուսումնափրեամբ», Վենետիկ - Ս. Ղազար, 1933:

⁸ Բազմավէպ, 1933, թ. 9-10, Հ. Ղեւոնդ ՏԱՅԵԱՆ, Եկայք հաւատացեալք, էջ 465-469:

⁹ Տողերիս հեղինակն այս թեմայով զեկուցում է կարդացել դեռեւ 1986-ին՝ Հայ միջնադարեան գրականութեան միջնագային գիտաժողովում, տե՛ս Ա.

րադառնանք Աւագ Շաբաթուայ խորհրդին Հայոց եկեղեցական տօնակարգում, որը Մաղկազարդից մինչ Ս. Զատիկ ընկած վրջանն է՝ սկսած Աւագ Երկուշաբթի օրուանից ընդհուպ մինչեւ Աւագ Շաբաթ օրը ներառեալ: Այն կոչւում է նաեւ Գարչարանաց կամ Մեծ Շաբաթ, որի իւրաքանչիւր օրը նշում է մեծատառով՝ ընդգծելով սրա բացարիկ նշանակութիւնն ինչպէս քրիստոնեայ ազգերի համար ընդհանրապէս, այնպէս էլ հայերիս համար՝ մասնաւորապէս: Աւագ Շաբաթուայ առաջին երեք օրերն անուանւում են ի յիշատակ Աստուածաշնչի Նոր Կտակարանում շարադրուած որոշակի իրադարձութիւնների, որոնք վերարծարծում են այդ օրերին հնչող ընթերցուածներում, այն է. Աւագ Երկուշաբթին՝ Զորացած Թզենու, Աւագ Երեքշաբթին՝ Տասը Կոյսերի, իսկ Աւագ Զորեքշաբթին Յիսուսի օծումն է կնոջ ձեռամբ: Սակայն հայոց եկեղեցում առաւել հանդիսաւոր արարողութիւնների շարքը սկիզբ է առնում գլխաւորապէս Աւագ Հինգշաբթի օրուանից, որը բացւում է Առաւոտեան Ս. Պատարագի մատուցմամբ՝ ի նշան Հաղորդութեան խորհրդի:

Այն իմաստաւորում է նաեւ Յիսուսի զոհաբերութիւնը, այսինքն՝ աղամական մեղքից մարդկութեան փրկութեան համար նրա խաչուելն ու զոհուելը: Նոյն օրուայ երեկոյեան տեղի է ունենում Ունլուայի արարողութիւնը, որ խորհրդանշում է Յիսուսի ցուցաբերած քրիստոնէական խոնարհութիւնն իր 12 աշակերտների հանդէպ: Քանի որ եկեղեցական սովորութեան համաձայն ծիսական օրն սկսում է նախորդ երեկոյից, ապա հէնց Հինգշաբթի երեկոյինան տեղի ունեցող Խաւարման արարողութիւնն արդէն իսկ խորհրդանշում է Աւագ Ուղբաթ օրուայ՝ Յիսուսի մատնութիւնը Յուլայից, ինչպէս նաեւ Խաչի վրայ անցկացնելիք նրա չարչարանքի ահաւոր ժամերը, որոնցից վերջին երեքը՝ կատարեալ խաւարում, երբ երկինքը մթնել է ու օրը ցերեկով երկրի վրայ տիրել կատարեալ խաւար ու քար լուռթիւն: Այս անձկութեան եւ միայնութեան մէջ յայտնի են մարդկութեան Փրկչի եօթ խօսքերը, որոնք էլ եկեղեցում խորհրդանշում են եօթ աւետարանների ծիսական ընթերցմամբ: Աւագ Ուղբաթի արարողակարգում հնչում են

Դ. Վարդումեան, Սահակ Պարթեւի երեք շարականների ձայնագրութիւնները, Ձեկուցումների հիմնարդութիւններ, Երեւան 1986, էջ 208-209. Նաեւ նոյնի ուսւերէնը. Ա. Դ. Վարդումյան Հոտուսի տրք շարական Սաակ Պարտևա «Международная конференция по армянской средневековой литературе» Тезисы докладов» стр. 44-45.

յաւուր պատշաճի սաղմոսներ ու շարականներ, որոնք հիմնականում պատկանում են կիլիկիոյ Հայոց կաթողիկոս, մեծատաղանդ երգահան Ա. Ներսէս Դ. Շնորհալու բեղուն գրչին։ Դրանց շարքում առանցքային դեր ունեն «Արծաթսիրութեամբըն մոլեալ» Բձ Օրհնութիւնը, «իջեր յերինից» Գձ Հարցը եւ «Եկալք հաւատացեալք» Դձ Մտեղի Համբարձին¹⁰, որոնք կատարւում են տարուայ մէջ միայն մէկ անգամ եւ վերագրւում հինգերորդ դարի Հայոց կաթողիկոս, տաղանդաւոր երգահան Ա. Սահակ Ա. Պարթեւին եւ համապատասխանաբար արտացոլում են Աւագ Շարաթուայ հանգուցային իրադարձութիւնները՝ Ցիսուսի Մատոնութիւնը, Անարդումն ու Խաչելութիւնը։ Սրանց գրական տեքստերը Նոր կտակարանի համապատասխան դրուագների յարասութիւններն են, ըստ որում Ա. Սահակը հաւանօրէն յնուել է յատկապէս Յովհաննու աւետարանի վրայ, ուր Ցիսուս ինքն է մէջքին կրում մարդկութեան փրկութեան՝ կենաց Խաչը Գողգոթայի ճանապարհին։ Ինչպէս ամբողջ Շարավնոց ժողովածուի, այնպէս էլ Ա. Սահակ Պարթեւի երաժշտական ժառանգութեան պակը կազմող այս երգերի մեղեդինները հինգերորդ դարից ի վեր անշուշտ որոշ փոխութիւնների են ենթարկուել։ Նախ նշելի են դրանց միջնադարեան այլեւայլ խմբագրութիւնները, որոնցից ամենակարեւորը Ա. Ներսէս Շնորհալունն է, որը 12-րդ դարում վերախմբագրել է իր նախնիններից ժառանգած գրեթէ բոլոր հոգեւոր երգերը։ Ցետագայում՝ խագերի բանալու կորսատեան հետեւանքով, մի քանի դար շարունակ հայոց հոգեւոր երգեցողութիւնը փոխանցուել է բանաւոր աւանդութեամբ, հայաշատ տարբեր վայրերում ձեռք բերելով տեղային զանազան տարբերակումներ։ Գալով խնդրոյ առարկայ երեք շարականներին նշենք, որ դրանցից երկուա՝ «Արծաթսիրութեամբըն մոլեալ» եւ «իջեր յերկնից» Հարցը չ. Ղեւոնդ Տայեանի Շարակնոցի Դ. հատորում առկայ են երկուական նմոյշով, որոնցից առաջինները Մխիթարեան կամ վենետիկեան աւանդական երգուածքներն են եւ ոճականօրէն չեն տարբերում բազմահատորեակի այլ երգերից¹¹։ Իսկ սրանց երկրորդ նմոյշները, ինչպէս նաև «Եկալք հաւատացեալք» Համբարձիի միակ նմոյշը¹², ըստ Հայր Ղեւոնդ Տայեանի, դասւում են Համբար-

10 ՏԵ՛Ս ծան. 5.

11 Զայնադրեալ Շարակնոց, հ. Դ, կանոն Մեծի Ուրբաթին. 2, «Արծաթսիրութեամբն», Եղանակ Ա., էջ 245-260, «իջեր յերկնից», Եղանակ Ա., էջ 261-264.

12 Նոյն տեղում, «Արծաթսիրութեամբն», Եղանակ Բ., էջ 273-283, «իջեր յերկնից», Եղանակ Բ., էջ 284-296, «Եկալք հաւատացեալք» էջ 311-325:

ՃՈՒՄ Լիմոնճեանի գրչին: Հ. Ղեւոնդը համարում է, որ վերջինիս աւանդական եղանակը կորստեան է մատնուել եւ հինգ այս պատճառով էլ բերում է միայն Լիմոնճեանի հեղինակած մեղեդին, որը, ինչպէս եւ նախորդ երկուար, ստեղծուած է Ս. Սահակ Պարթեւի հեղինակած շարականների գրական հինքով: Խսկոյն եւեթ հարկ է ճշգրտել այն հանգամանքը, որ «Եկայք հաւատացեալք»-ի եղանակը, եթէ կորստեան է մատնուել, ապա լոկ Սուրբ Ղազարում, իսկ այլ հայշատ վայրերում դրա մեղեդին բարեբախտաբար պահպանուել է: Լիմոնճեանի ձայնանիշերով այն գրառուած է թէ՛ Նիկողայոս Թաշճեանի¹³, եւ թէ՛ Եղիա Տնտեսեանի Ձայնագրեալ շարակնոցներում¹⁴: Ուշագրաւն այն է, որ 1933-ին առանձին գրքոյին լոյս ընծայուած¹⁵, ինչպէս նաեւ «Բազմավիճակ»-ի՝ նոյն թուին լոյս տեսած հատորի «Նախագիտելիք»-ում¹⁶ ուշագիր ընթերցողը կարող է գտնել հետեւեալ տողերը. «Անտարակոյս մեր երաժշտութեան ծաղկեալ շրջանի նախնկին արուեստագիտերն ալ ուզած են այս գլուխ-գործոցը օժտել վսեմ իմաստներուն համապատասխանող մեղեդիով մը: Առ այս՝ սառուցիւ անժխտելի ապացոյց մը կարելի է նկատել մեր կանոնական Բկ եւ Դկ Ստեղիներէն դուրս կատարուած միակ շեղումը, որով «Եկայք»ը բացառաբար «Դա Ստեղի» սահմանուած է. ափսո՞ն որ անոր եղանակը ուրիշ շատ երգերու պէս կորստւած է այսօք: Բարեբախտաբար՝ հետագայ դարու մը մէջ՝ դարձեալ գովելի եւ մէծ նախանձախնդրութեան առարկայ եղած է ան: Եւ այդ դերը վիճակուած ըլլալ կը քուի ազգային մեծահամեար երաժիշտ Պապա Համբարձում Լիմոննեանի (1768-1839), որուն շարադրած եղանակը, եւ այս անգամ Դկի վրայ (Կանոնական առմամբ Դկ ստեղի եղանակ գոյութիւն չունենալով Շարակնացին մէջ, ինչ-որ ծամօթ է իմա՝ ամէն տեղ նոյնպէս Դկի վրայ կը նուագուի «Եկայք»ը: Նոյն գծով կ'ըթթանայ նաեւ էջմ. Ձայնագրեալ Շարակամինը, ուր ան կը հետեւի առաւելապէս սովորական Դկ ստեղիններուն, եւ չունի քնաւ Լիմոննեանի ընծայուած «Եկայք»ին անզուգական գեղմ ու վսեմութիւնը, բերանացի աւանդութեամբ մեզ հասած ու գուրգուրանինով պա-

¹³ Ձայնագրեալ Շարական Հոգեւոր երգոց Սուրբ եւ ուղղափառ Առաքելական եկեղեցւոյ Հայաստանեայց, աշխ. Նիկողայոս Թաշճեանի, ի Վաղարշապատ, 1875, էջ 427-429.

¹⁴ Շարական Ձայնագրեալ, Եղիա Ս. Տնտեսեան, Ա մաս - Ե մաս, իսթանապօլ, 1933, Բ մաս, էջ 258, Ե մաս, էջ 741- 742:

¹⁵ Տե՛ս ծան. 7, Նախագիտելիք, էջ 6:

¹⁶ Տե՛ս ծան. 8, Նախագիտելիք, էջ 466:

հուած է ցայսօր Ս. Ղազարու Մայրավանքին մէջ՝ շնորհիւ մեր երաժիշտ Վարդապետներուն, որոնք սորված են – ինչպէս ծերունի Վարդապետները կ'ըսեն դեռ – մեծ արուեստագէտին առաջին աշակերտներէն մեր Գերապ. Եղուարդ Հիւրմիւգեանէ եւ Հ. Օգոստինոս Գույումնեանէ»¹⁷:

Այս մէջբերումից կարելի է եզրակացնել, որ Հ. Ղեւոնդ Տայեանը բացառիկ կարեւորութիւն է տուել յատկապէս «Եկայք Հաւատացեալք» Ստեղի Համբարձիկին, ինչը պայմանաւորուած է Լիմոնճեանի հեղինակած շարականի իւրօրինակ գեղարուեստական յատկանիշներով։ Գտնելով, որ այս նմոյշն իր անսովոր ձայնեղանակով աւանդական Բկ եւ Դկ Ստեղիներից կատարուած միակ շեղումն է ողջ Շարակնոցում՝ երկրորդ անգամ սրա ձայնեղանակը նշելիս Հ. Ղեւոնդի շարադրանքում վրիպակ է սպրողել, այն է՝ Դձ-ի փոխարէն տպագրուել է Դկ, երբ հէնց դրան վերաբերող տողատակում հեղինակը բացատրում է տուեալ՝ Դձ Ստեղի եղանակի բացառիկ լինելու փաստը (տե՛ս նախորդ էջում): Թոռուցիկ համեմատութիւն կատարելով այս շարականի էջմիածնական եւ լիմոնճեանական նմոյշների միջնեւ, Հ. Ղեւոնդը գերապատուութիւնն անվիճելիօրէն ընծայում է վերջինին։ Քննարկուող մէջբերման աւարտին նա յայտնում է, որ Լիմոնճեանի այս երկարաշունչ շարականը բանաւոր աւանդութեամբ է հասել իրեն՝ սկսած նրա առաջին աշակերտներից։ Ամենայն հաւանականութեամբ նոյնը կարելի է ասել նաեւ ինդրոյ առարկայ շարականներից առաջին երկուսի մասին։

Այսպիսով, Համբարձում Լիմոնճեանի հեղինակած երեք շարականներից առաջինը «Արծաթսիրութեամբն մոլեալ» Բձ օրհնութիւնն է¹⁸, որը բացում է օրհնաբանական հնագոյն սկըսուածքով։ Բձ ձայնեղանակն այս շարականում, ինչպէս նաեւ ողջ շարակնոցում, ինքնատիպ դրսեւորում է ստացել։ Եթէ սովորաբար այն աւարտում է ց հնչիւնով, ապա այստեղ այն աւարտում է մ-ի վրայ հանգչող վերջնայանգածեւով, ըստ որում՝ բոլոր վեց տներում (նշելի է, որ այս շարականը բաղկացած է երեքական տուն պարունակող երկու պատկերից)։ Նկատելի է, որ Բձ-ը այս-

¹⁷ Նոյն տեղում։

¹⁸ ՏԵ՛Ս ծան. 11, առաջին նմոյշը, էջ 273-283, ինչպէս նաեւ յօդուածիս վերջում գետեղուած ձայնագրութիւններից առաջինը, որը շարականի Ա. տունն է, էջ 564-566։

տեղ արձանագրուած է աւանդական հնչամասից մաքուր քառեակ ձայնամիջոցով՝ ցած¹⁹: Մանր ընթացքով զարդոլորուն ոճի այս շարականում տեքստի իւրաքանչիւր վանկը հիմնականում եղանակաւորւում է մեղեդիական ծաւալուն ելեւէջներով: Երգի երաժշտական բարձրակէտը կառուցուած է տեքստի իմաստային հէնքի վրայ, ուր «Ցուղա» բառին համադրուում են մեղեդու fis-es ածանցումները՝ նախընթաց f-e հնչիւններից յետոյ: Մերթընդմերթ կիրառելով այս տպաւորիչ հնարքը, հեղինակը հասնում է ոչ միայն արեւելեան գունեղութեան, այլեւ դրամատիկ յուզականութեան:

Օրհնութեանը յաջորդում է «իջեր յերկնից» Գձ Հարցը²⁰, որը նոյնպէս բացւում է իրեն յատուկ միջնադարեան սկսուածքով: Այն հանգչում է վերջնայանգաճեւի և հնչիւնով՝ աւանդական ց-ի փոխարէն, իսկ շարականի յաջորդ տներն աւարտուում են առվ, որն այս ձայնեղանակի գերիշխող հնչիւնն է: Սա նշանակում է, որ աւանդական հնչամասի համեմատ այս շարականի մեղեդին դրառուած է փոքր եռեակ ձայնամիջոցով ցած²¹: Այն բաղկացած է երեք տնից, Գործատնից, որը Հարցի չորրորդ տունն է, որին հետեւում է փառատրական բանաճեւը, իսկ հինգերորդ տնից յետոյ՝ «Այժմ եւ միշտ...» բանաճեւն է ու նոր միայն վերջին՝ վեցերորդ տունը, որն էլ կրկին աւարտում է ե-ով՝ սկսուածքի ու փառատրութիւն նման: Ցայտնի է, որ Գձ-ը բնոյթով ամէնից արեւելեան երանգաւորում ունեցող ձայնեղանակն է: Իսկ այս երգի հիմքում ընկած է f-gis մեծացրած երկեակ ձայնամիջոցը, որի առաջին հնչիւնը երբեմն փոխարինուելով fis ածանցումով, առաւել եւս ընդգծում է նախորդի ստեղծած գունեղ տպաւորութիւնը: Այս շարականը Աստոյ որդոր՝ Խաչելութեան ընթացքում յանուն մարդկութեան կրած չարչարանքների, մասնաւորապէս գեղարդով խոցուելու պահի նկարագրութիւնն է, որից կենդանարար աղբիւր բխելով՝ «...լրւաց զտիեզերս ի մեղաց»:

¹⁹ Սա վերաբերում է բազմահատոր Շարակնոցիս Բձ-ում ընթացող բոլոր շարականներին:

²⁰ Տե՛ս ծան. 11, Երկրորդ նմոյշը, էջ 284-296, ինչպէս նաև յօդուածիս վերջում գետեղուած ձայնագրութիւններից երկրորդը, որը նոյնպէս շարականի Ա տունն է, էջ 567-570:

²¹ Նոյնը վերաբերում է այս Շարակնոցի Գձ-ում ընթացող բոլոր շարականներին:

Վերոնշեալ շարականներում Լիմոնճեանին յաջողուել է մեղեդիական եւ կշռութային (ուիթմական) զուսպ եւ դիպուկ արտայացտչամիջոցներով հասնել տեքստում առկայ հանդուցային դրուագների երաժշտական տպաւորիչ մեկնաբանութեան:

Քննարկուող ստեղծագործութիւններից վերջինը «Եկայք հաւատացեալք» Դճ Ստեղի Համբարձին է²², որին Հայր Ղեւոնդ Տայեանը անդրադարձել է դեռեւ 1933-ին թէ՛ առանձին դրցուկով, թէ՛ «Բազմավէպ» հանդէսի էջերում²³: Այս շարականը նոյնափէս նուիրուած է Յիսուսի Խաչելութեանը, որում նախ՝ կոչ է արւում հաւատացեալներին երկրպագել Սր. Երրորդութեանը, ապա նշում է, որ Յիսուսն իր պատուհասի փայտը՝ խաչը, ուսի վրայ բարձած է գալիս կառափնարան: Այնուհետ խօսւում է Անմահ թագաւորի՝ նոր գերեզմանում թաղման մասին, խորհրդանշելով նաեւ յաջորդ օրուայ՝ Աւագ Շարաթի, Թաղման հանդիսաւոր արարողութիւնը: Ինչ վերաբերում է շարականիս երաժշտական բաղադրիչին, ապա այն բացառիկ է ոչ միայն իր ձայնեղանակով, այլև մեղեդիական ու ուիթմական շքեղութեամբ: Քննարկուող Երեք նմոյշներից սա ամենածաւալունն է, որի մէջ երբեմն տեքստի մէկ վանկին բաժին է ընկնում մեղեդիական ելեւէջների մի քանի տող: Այս նմոյշը նոյնպէս բացւում է համբարձիններին յատուկ հնագոյն սկսուածքով, որը շարականի բոլոր երեք տների եւ փառատրական բանաճեւելի պէս եղրափակուում է f-ով աւարտուող վերջնայանգաճեւով: Սա նշանակում է, որ եթէ սովորական Դճ Երգերն իր Շարակնոցում Հ. Ղեւոնդը գրառել է փոքր եռեակ ձայնամիջոցով ցած, ապա այս Ստեղի Համբարձին բացառաբար գրառուած է մեծ երկեակ ձայնամիջոցով ցած: Այս դէպքում ձայնեղանակիս գերիշխող հնչիւնը b-ն է, որը նաեւ սրա եղրափակիչ հնչիւնն է, սակայն ծանր շարականները հիմնականում աւարտուում են վերջին եղրափակիչ հնչիւնով, որն այստեղ f-ն է՝ աւանդական g-ի փոխարէն: Գործածական հնչիւնն այս շարականում Դճ-ի համար յատկանշական ան է՝ երբեմն համագրուած աս-ի հետ: Արդ, այս իւրօրինակ Համբարձիում մեղեդին վերջնայանգաճեւում պարունակում է վերոնշեալ գործածա-

²² Տե՛ս ծան. 12, Երրորդ նմոյշը, էջ 311-325, ինչպէս նաեւ յօդուածիս վերջում գետեղուած պիտի լինէր շարականիս Ա տան ձայնագրութիւնը, որ տեղի սղութեան պատճառով լոյս կտեսնի յաջորդ համարում:

²³ Տե՛ս ծան. 7 եւ 8:

կան հնչիւններից ա-ն, ինչպէս պէտք է լինէր Դժ-ում ընթացող շարականում²⁴: Սակայն վերջնայանգաձեւից առաջ ա-ին յաջորդում է ցիս հնչիւնը, որը հաւասարաշափ կիսամայների դէպքում աս-ի էնհարմոնիկ համարժէքը կը լինէր, սակայն այստեղ այն աւելի որոշակի է դարձնում և հնչիւնի գերակայութիւնը: Վերջինս քառորդ սունով նուազ ցած է սովորականից, իսկ ցիս՝՝ նոյնքան առաւել բարձր՝ որով իրեն յաջորդող f -ի հետ մեծացրած լայն երկեակ կազմելով, էլ աւելի տպաւորիչ է դարձնում շարականիս արեւելեան գունագեղութիւնը:

Այսպիսով, Համբարձում Լիմոնճեանի ստեղծած այս Համբարձին չի կարելի դիտարկել միջնադարեան շարականներին յատուկ կանոնական խիստ չափանիշներով: Լինելով հանդերձ միանգամայն հայշունչ ստեղծագործութիւններ եւ յօրինուելով Շարակնոցի տուեալ միաւորների կառուցուածքային հիմնական առանձնայատկութիւնների ծիրում՝ նրա հեղինակած երեք շարականներն անշուշտ կրում են նաեւ Կոստանդնուպոլամի երաժշտական բազմազգ միջնորդուի կնիքը: Ընդգրկելով ուշ միջնադարի տաղային արուեստին յատուկ ճոխ տարրեր ու ինքնատիպ անցումներ, այս շարականների մեղեդիական լեզուն բնութագրում է յանկարծաբանական կերտուածքով եւ մեծակերտ-զարդարական ոճով: Համբարձում Լիմոնճեանի խնդրոյ առարկայ ստեղծագործութիւնները 19-րդ դարում յօրինուած շարականների բացառիկ նմոյշներ են, քանի որ ժանրի զարդացումը 15-րդ դարից ի վեր անբարենպաստ հանգամանքների բերումով ընդհատուել էր: Անշուշտ, Լիմոնճեանն այս երեք շարականների լոկ մեղեդիների հեղինակն է, սակայն հէնց այն հանգամանքը, որ նա վերջիններս վերանդանակաւորել է յատկապէս Աւագ Ուրբաթի խորհրդին ձօնուած՝ Սուլրը Սահակ Պարթեւի հնագոյն երգերի տեքստերով, վկայում է այն մասին, որ հայոց առաջին շարականագրի եւ 19-րդ դարի հեղինակի միջեւ ստեղծագործական ուշադրաւ կա-

²⁴ Այդ կերպ է գրառուած նաեւ նոյն հատորում առկայ «Յովսէփ քեզ հաւատացեալ» Դկ Ստեղի Համբարձին (էջ 360-365), որը նոյնպէս եղրափակում է յ հնչիւնով վերջնայանգաձեւում առաւելապէս դիմելով աս-ին, եւ աւարտուելով Դկ-ում: Սակայն դրա մասին առաւել հանգամանալից կը խօսուի իր տեղում:

²⁵ Տե՛ս շարականիս տողերի վերեւում առկայ՝ ածանցման փոքրիկ նշանները. Bemolette (-1/4) եւ Triesis (+3/4) որոնցից առաջինն իջեցնում է տուեալ հնչիւնը 1/4 տոնով, իսկ երկրորդը՝ բարձրացնում 3/4-ով:

մուրջ է նետուած: Զէ՞ որ հէնց Լիմոնճեանի ստեղծած նոր հայկական ձայնագրութեան համակարգի կատարելութեան չնորհիւ է, որ աղաւաղումից եւ կորստից փրկուեց հայոց հոգեւոր երաժշտական հակայական ժառանգութիւնը: իսկ Վենետիկի Մխիթարեան միաբանութեան անդամ Հ. Ղեւոնդ Վրդ. Տայեանն իր Ձայնագրեալ Շարակնոցում առաջին հերթին մեծ գուրգուրանքով զետեղելով Համբարձում Լիմոնճեանի հեղինակած երեք շարականները՝ մոռացումից փրկեց եւ գիտական լրջանառութեան մէջ դըրեց վերջինիս նշանակալից ստեղծագործութիւնները, որոնք վկայում են նրա՝ երգահանի անվիճելի ձիրքը: Այսպիսով, դժուար է գերազնահատել այս ձայնագրութիւնների գիտական ու գործնական նշանակութիւնը: Թերեւս սրանք կարելի է համեմատել նոյնիսկ կոմիտաս Վարդապետի կատարած բարձրարուեստ ձայնագրութիւնների հետ, որոնցով առաւել արժէքաւոր է դառնում Հ. Ղեւոնդ Տայեանի լոյս ընծայած Ձայնագրեալ Շարակնոցը:

ԱՐՓԻ ՎԱՐԴՈՒՄԵԱՆ

Ա. Ր Ձ Ա. Թ Ս Ի Ռ Ո Ւ Թ Ե Ա. Մ Բ Ի,
A RZATSIRUTIAMPN

3^e Mode

(Եղանակ Բ. - ԽԸ) 0 0 Lento $\text{♩} = 50$ (poco con espressione)

dolce

affell ten. p mf

w pp pp

pbw *ria* *l.*

Stringendo

moviendo 3

U - - - -
Ar - za - - - -
w

p - - - -
t - si -

pianissimo
ru - - - -

sempre animato *tr* *mf*
- *pianissimo* - - - - d - *pianissimo* - -
- tia - - - m - pe - -

w
tu con grande espressione *mf*
- u - - - -
- n mo - - - -

callando *w*
lia - - - -

dolce c' express. e PP (b)
Hu - - - -

condolore (b) *appena* (c)
- - - - qu - - - -
- - - - ta, - - - -

mf

ւ - զւ - ր ւ - մէz
e - ziu - g e -

dolce
ւ - զ - զւ - ր զւ -
e - z - va - r ta -

allarg. *tu a tempo*
սի - սն ւ - ն ե -
bè - dn e - nt yè -

p cresc.
ր - սն ւ -
rè - su

mf
զ - ար - ծա թո -
n ar - za . - to -

f
հ - սն կ - հ
he su k - h

calmandosi
ր - սն կ - ի
rè su k - i

3 ս - ն մա -
tze - n ma -

w
ս - սն պ - ը
d - nè - r.

Լ Զ Ե Բ Շ Ե Բ Կ Ե Ւ Ց

I C È R H È RG H N I T Z

(ԵՂԱԿԱԿ Բ. - ԽԵ)

5c Mode

Lento $\text{J} = 54$ Solo elegiaco

ԱՄԲ Գ. Զ.

Op. 4 - zkm - - -
Orh - nia - - -

mf

dolce affettuoso

r A un - nkm s
 r A sd - va s

dolce affett.

ha r yrc b th reg op. 6
 ha r yrc b th mè rotz orth

cresc.

shm - - -
 nia - - -

p o

marcato

phi - aw - -
 pa - ra - -

Sheet music for voice and piano, featuring six staves of musical notation with lyrics in Armenian and French.

Staff 1: Treble clef. Key signature: A major (two sharps). Dynamics: *ph*, *ff*. Articulation: *vo*, *ria*, *l*, *a*. Performance instructions: *dim.*, *ten.*, *poco cresc*, *aff. assai*.

Staff 2: Treble clef. Key signature: A major (two sharps). Dynamics: *pp*, *p*. Articulation: *nu*, *b*, *n*, *ko*.

Staff 3: Treble clef. Key signature: A major (two sharps). Dynamics: *p*. Articulation: *ha*, *vi*.

Staff 4: Treble clef. Key signature: A major (two sharps). Dynamics: *w rall.*, *pp*. Articulation: *dia*, *hi*.

Staff 5: Treble clef. Key signature: A major (two sharps). Dynamics: *p*, *f*. Articulation: *I*, *çè*, *r*, *hér*.

Staff 6: Treble clef. Key signature: A major (two sharps). Dynamics: *cresc.*, *w*, *dim.*, *cresc.*, *fff*. Articulation: *ghni*, *g*, *m*, *tz*, *a*.

Staff 7: Treble clef. Key signature: A major (two sharps). Dynamics: *mf*. Articulation: *z*, *e*, *s*, *ghi*.

Staff 8: Treble clef. Key signature: A major (two sharps). Dynamics: *dim.*, *mf*. Articulation: *zpn*, *vo*, *r*.

roll. *p* *fa tempo*

q^b - *ti* - - - *ho* - -

q^b - - - - *lè* - *n* - *i*

pianiss. *pianiss.* *pianiss.* *mf* *p*

ma - - - *te* - *nè* - -

affect *mf*

sia - - - *ri* - *gan* - *za* - -

pianiss. *pianiss.* *pianiss.* *z* *ne* - -

dolciss. *p* *pp* *sotto voce*

s - - - *ba* - -

mf

liz - *u* - - - -

ten *mf* *ten*

re - - - *r* - - -

ten.

allarg. mf *al tempo*

3

- նե - - մկ - է - - զ -
- né - - mk - e - - z -

- քէ - որ - է - ի - - ր - հա -
- këz - vor - è - i - - r - ha -

ten.

- ռա - - կ - պ - մ - - ս
- ra - - c - p - m - - s

զ - ա - մ - է - - ն - ա - - ս
z - a - m - è - - n - a - - s

- յն - հ - ա - յ - ն - ս
- yn - h - a - y - n - s

PP *allarg.* *morendo*

- ւ - - մ - ի - ս - ե -
- u - - m - i - s - e -

The Late Mediaeval Church Music of the Venetian School
According to Rev. Father Ghevond Tayean's Recorded Sharaknots

Part B.

ARPI VARDUMYAN

(summary)

In the first part of this article it was mentioned that among the volumes of Rev. Father Ghevond Tayean's Recorded Sharaknots, the 4-th was published first. It includes the sharakans sung at the Armenian Church ceremonies on Passion Week. The most important of them are the Passion Friday Hymn (in 3-rd mode), Fathers (in 5-th mode) and Ascension (in 7-th mode Steghi), that are dedicated to Jesus Christ's Betrayal, Insult and Crucifixion. Those are the most ancient Armenian sharakans, which are traditionally ascribed to St. Sahak Partev's pen, a Catholicos of the 5-th century. The musical components of those spiritual songs have been edited several times during the Middle Ages, especially by the Catholicos of the 12-th century, talented composer St. Nerses Shnorhali. And F. Ghevond Tayean has represented other versions of those 3 sharakans melodies in his Recorded Sharaknots, the author of which was the famous creator of the New Armenian Notation and musicologist Hambardzoum Limonjyan. They are monumental - decorative styled grave songs with rich and impressive elements of late mediaeval tagh art.

Thus, above-mentioned sharakans of the 4-th of Ghevond Tayean's multi volume Recorded Sharaknots witness the remarkable composer's talent of their author Hambardzoum Limonjyan. The notation of those songs in the Sharaknots of Venetian Me- khitarian Congregation gives them more volume, and they make a sterling bridge between 5-th and 19-th centuries Church music tradition.